ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2017թ. թիվ 259-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 189-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. հուլիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 801-Ն որոշումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը նոր խմբագրությամբ և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2002թ. նոյեմբերի 13-ի թիվ 189-Ա որոշման թիվ 134 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Վ.Մխիթարյանին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձրաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ սահմանված կարգով պետական գրանցում իրականացնելու նպատակով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2017թ. օգոստոսի 24
ք.Վանաձոր